

պէս վերը տեսանք, 1709-ի յիշատակագր-
րութեանց կարգին:

Մտագիր չեմ ծանրանալու յիշատա-
կագրիս պարունակութեան դաւանական
մասերուն վրայ: Անտարակոյս, քրիս-
տոնէութեան քարոզիչէ մը այս ոչ-քրիս-
տոնեայ թելադրանքը ինքնին բացատրու-
թեան կարիք չունի: Յոյց կուտայ մոլե-
ռանդութեամբ համեմեալ կատաղութիւն
մը արդէն տառապակոծ հայութեան հան-
դէպ, որ ցրուած էր մահմետական աշ-
խարհին մէջ:

Կան սրբագրելի անուններ հայ դա-
ւանական ժողովներու: Ասոնցմէ մէկը
Therin — Դուինի ժողովն է անտարա-
կոյս՝ սխալ ընթերցուած ձեռագիր յու-
շագրէն: Ասկէ 120 տարի վերջ կը յիշուի
Ghame-ի ժողովը, որ աղաւաղեալ ա-
նուն մըն է եւ, անտարակոյս, Կարին
պէտք է կարգալ: Դուինի ժողովը ան-
շուշտ 506-ին Բարգէն կաթողիկոսի օրով
կատարուած ժողովն է: Իսկ Կարնոյ ժո-
ղովը եզրի օրով տեղի ունեցած ժողովն
է, որ մօտաւորապէս 120-130 տարի վերջ
էր: Կը յիշուի նաեւ Տարսոնի, Սսոյ, Ա-
տանայի եւ Chernac-ի ժողովը: Վեր-
ջին անունը, դարձեալ աղաւաղուած է.
հաւանաբար Քոնների դիւղին վանական
ժողովին կ'ակնարկէ, ուր Ունիթօրներ
Յակոբ Քոննեցիի առաջնորդութեամբ հա-
ւաքուեցան եւ հաստատուեցան Քոնների
դիւղին մէջ 1330 թուականներուն:

ԵՐՐՈՐԴ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹ

«Պատուի, առաքինութեան, ինկա-
ցութեան եւ զօրութեան մէջ ամենայայտ-
նի, փաշտներ եւ գաւորներ (դատաւոր),
մեր հպատակութեան եւ զօրութեան ներ-
քեւ գտնուող, եւ մեր կայսրութեան ու
թագաւորութեան պաշտպաններ եւ ար-
դարութեան դործադրող»: (Սուլթանա-
կան հրովարտակ):

«Թո՛ղ գիտցուի արքունի հրամանաւ:
Կարգ մը ֆրանկ քահանաներ, մասնաւոր
արար Յիսուսեաններ, ի մէջ այլոց, որ-
ոնք շնորհիւ մեր կայսերական վեհանա-

նութեան եւ ներդամութեան, եկեղեցի-
ներ ունին ու կը բնակին մեր լաւագոյն
քաղաքներուն մէջ՝ սրբազան արարողու-
թիւն կատարելու համար դեսպաններու,
հիւպատոսներու, Ֆրանկ վաճառականնե-
րու եւ պապական կրօնքէ ուրիշներու հա-
մար, կը վրդովեն, կը բաժնեն եւ կը մո-
լորցնեն մեր նուաճած հպատակները,
մասնաւորաբար հայերը: Թէ այս Յիսուս-
եանները (զոհ չմնալով վայելելէ ազա-
տութիւնը, զոր մենք շնորհած ենք ինչպէս
օտարներու, նոյնպէս եւ մեր հպատակ-
ներուն, ըլլան անոնք հայ, յոյն, հրեայ,
կամ ուրիշ՝ կատարելու համար իրենց
ծէսը մեր քաղաքներուն մէջ, եւ նոյնիսկ
բանտերուն մէջ, ուր կը պահուին իրենց
հաւատքէն մեր դերինները) դաղտնի նպա-
տակներով, մոլորութեամբ լեցուն, կ'եր-
թան մեր եւրոպական եւ ասիական նա-
հանգները եւ դրամի, պատուի եւ ուրիշ
բաներու խոստումներով կը գրգռեն մեր
յիշեալ հպատակները Պապական կրօնքը
ընդգրկելու, ըստ իրենց Լատին եկեղե-
ցիին: Անոնք արդէն մոլորեցուցած են
պատրիարք մը եւ քանի մը վարդապետ-
ներ: Ատոր համար կարգ մը հայ քահա-
նաներ եւ ուրիշներ, որոնք կը շարունա-
կեն մնալ իրենց հաւատքին մէջ, նաեւ ի-
րենց մեղի պարտական հաւատարմու-
թեան մէջ, խորշելով բոլոր վեհապետու-
թիւններէն բացի մերինէն, յաճախ զան-
գատած են մեզ՝ Բարձրագոյն Դրան այս
դժուարութեանց համար, այսինքն՝ մո-
լորեցմանց եւ բաժանմանց համար: Սա-
կայն, ասկէ առաջ քիչ ուշադրութեան
արժանացած է իրենց ցաւը, նկատուած է
աւելորդ խնդիր քրիստոնեաներուն մէկ
կամ միւս կերպ Յիսուսը պաշտելը, որ-
պէսզի հաւատքի ազատութեան դէմ բան
չկատարուի, — բան մը, որ մենք մեր բո-
լոր կայսրութեան մէջ կը թոյլատրենք:
Եւ, սակայն, զանգատելու պատճառները
չատցած են եւ բազմաթիւ հայեր վրդո-
ված են ֆրանկ քահանաներու խարեպա-
տի մոլորեցմանց պատճառաւ: Մէկ քա-
նին գլխաւոր վարդապետներէն, որոնք